ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 21 » մայիս 2026թ. No 2904 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2605-26 առ 18.05.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 4 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Լ.ՆԱՆՈՒՇՅԱՆ

Recoverable Signature

X 

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի մայիսի « 21 » - ի N 2904- Ա հրաման

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դոսյեի համապատասխանեցման (ռեֆերենտ երկիր) ընթացակարգով

գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Էլիրա | լեվոնորգեստրել | համակարգ ներարգանդային | 52մգ; (1) բլիստերում | Պրեգնա Ինտերնաթիոնալ Լիմիտեդ, Սուրվեյ No. 342/3, 29, Բհարատ Ինդուստրիալ Էստատ, գ. Բհիմփոր, Դաման-396 210 | Հնդկաստան | Պրեգնա Ինտերնաթիոնալ Լիմիտեդ, 13 Սուդյոդայ Էստատ, 136 Թարդեո փողոց, Մումբայ, Մահարաշտրա, 400034 | Հնդկաստան | Դ | 24103 15.05.2026 |
| 2 | Ցետրին | ցետիրիզին | դեղահատեր թաղանթապատ | 10mg; (20/2x10) բլիստերում, (30/3x10) բլիստերում | ԴՌ. ՌԵԴԴԻՍ ԼԱԲՈՐԱՏՈՐԻՍ ԼՏԴ., Ֆորմուլեյշնս Յունիտ - 6, Վիլլ. Խոլ, Նալագարհ Ռոադ, Բադդի, Դիստտ. Սոլան ՀՊ 173205 | Հնդկաստան | Դռ. Ռեդդիս Լաբորատորիս Լտդ., 8-2-337, Ռոադ Նօ. 3, Բանջարա Հիլլս, Հիդերաբադ-500 034 Տելանգանա | Հնդկաստան | ԱԴ | 24104 15.05.2026 |
| 3 | Ցետրին | ցետիրիզին | դեղահատեր թաղանթապատ | 10mg; (20/2x10) բլիստերում, (30/3x10) բլիստերում | Դռ. Ռեդդիս Լաբորատորիես Լիմիտեդ, Ֆորմուլեյշնս Թեչ Օպս II, Սուրվեյ Նօ. 42պ, 43, 44պ, 45պ, 46պ, 53, 54 & 83, Բաչուպալլի Վիլիջ, Բաչուպալլի Մանդալ, Մեդչալ Մալկաջգիրիլ դիսթրիքթ -500 090, Տելենգանա սթեյթ | Հնդկաստան | Դռ. Ռեդդիս Լաբորատորիս Լտդ., 8-2-337, Ռոադ Նօ. 3, Բանջարա Հիլլս, Հիդերաբադ-500 034 Տելանգանա | Հնդկաստան | ԱԴ | 24105 15.05.2026 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Արիլիա | դենոսումաբ | լուծույթ ներարկման | 60մգ/մլ; (1) նախալցված ներարկիչ 1մլ | ԱրիոԳեն Ֆարմեդ, No. 140, Քարաջ Մախսուս մայրուղու 24-րդ կմ, ք. Գարմդարեհ, Քարաջ վարչաշրջան, Ալբորզի նահանգ | Իրան | ԱրիոԳեն Ֆարմեդ, No. 140, Քարաջ Մախսուս մայրուղու 24-րդ կմ, ք. Գարմդարեհ, Քարաջ վարչաշրջան, Ալբորզի նահանգ | Իրան | Դ | 24106 15.05.2026 |